

ԵՐՇԱԼ ՈՅՍ ԵՐԵՐ ԵՏԵՆՆ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԸՌԵՒՄՆԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՋՄԻՒՌՆԻԱ ՈՒՐԲԱԹ 13 ՅՈՒՆԻՍԻ 1847

ԹԻՒ 287

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրտսանդնուպօրն , 10 յունիս :

Քաղաքակրթութիւնը ընդհանրապէս մեծ հանդիմանութեան մէջ է , և Յունաստանի գեղարդ վեճէն ՚ի զատ , որ անալ գրեթէ լրմնացած կը համարուի , ուրիշ խնդիր մը չկայ կարգադրելու : Եւրոպայի տէրութեանց և Վարձարգոյն Վրան մէջ , Վասնորոյ օսմանեան կառավարութիւնը ազատ ըլլալով արտաքին քաղաքական գործքերէ , իւր ինտերք և հոգատարութիւնը նուիրած է յատկապէս տէրութեան բարեկարգ յառաջադիմութեանը և առհասարակ իւր ամէն հպատակաց բարոյութեանը վրայօր : Վժուարին է մեզ մի ըստ միջ յառաջ բերելու մարդասիրական և գաղութեան արժանի խոհեմ ընթացքը այժմեան խորհրդարանին : որ նախագահութեամբ մեծ Լապարգոս բարձրագոյն (Նշա փաշային) անխնայ աշխատութեամբ հոգ կրտսանի միշտ Նորին Վ. հախառութեան առատագութեան և վեհանձնական գիտաւորութիւնները ՚ի գործ դնելու : և այս բանին համար օգոստոսիա Սուլթանը , ինչպէս յայտնի է հասարակութեանը , իւր կայսերական զօհունակութեանը յայտնի ապացոյցներ տուաւ քանի մը անգամ բարձրագոյն մեծ Լապարգոսին , նմանապէս խորհրդարանին ուրիշ անդամներ :

Վրէյ յմանիէ նահանգին նախորդ ապստամբ կառավարիչ Վհմէտ փաշան , զըջալով իւր սխալանքը և յանցանքը վրայ , Նորին Վ. հախառութեանը :

Թեան մարդասիրական ներողամտութիւնը կը խնդրէր խնարհաբար քանի մը ժամանակէ ՚ի վեր , ուստի օգոստոսիա Սուլթանը , որուն գթաբար քաղաքակրթութիւնները յայտնի է ամենուրեք , ոչ միայն հաճեցաւ թողութիւն շնորհելու վեհանձնաբար յիշեալ Վհմէտ փաշային , այլև յատուկ հրովարտակաւ հրաման տուաւ որ կարող ըլլայ մայրաքաղաքի մէջ բնակելու , արժանաւոր ուժիկ մըն ալ որոշելով անոր ծախուցը համար :

— Սարտէնիայի թագաւորը ազամանդեայ պատուական տուժի մը վրան իւր պատկերը նկարուած ընծայ խրկեց բարձրագոյն մեծ Լապարգոս (Նշա փաշային) , Կրտսանդնուպօրն իւր դեսպան վեհմարտի Պարոն թէքթուլի ձեռքը որ անցած շաբթու յատկապէս Պալթայիմանը գնաց Նորին Վարձարութեան յանձնելու համար յիշեալ մեծագին ընծան , նմանապէս իւր կառավարութեանը կողմանէ գրուած քաղաքակրթական նամակը :

— Թուսից օգոստոսիա Սուլթանը գրեթէ մէկ միլիոն զուրո շն արժողութեամբ ազնիւ ընծաներ խրկեց Կրտսանդնուպօրն Յունաց Պատրիարքին : Եւ ընծաներն են բահանայտակական մեծագին զարդեր , ազամանդեայ սկիւզ մը , Ստուածաշունչ մը խիստ գեղեցիկ տպուած և շքեղաբար կազմուած , և այլն :

— Ագիտոսի բարձրագոյն Մէհմէտ Վ. լի փաշային ամարանոցը , որ Պոսֆորի ասիական ծովագերբը ՚ի Վ. յքոզ կը շինուի , խիստ մեծ և փառաւոր պիտի ըլլայ : որուն քով Նորին Վ. հախառութեանը :

ուսթեան համար ալ պատուական հովանոց մը (քէօշք) շնուելու է : Սուլթանին համար որ քարաշէն պիտի ըլլայ , այնպէս կը կարծուի թէ 25 միլիոն զուրու շնաբար պիտի ըլլայ , և երեք կամ չորս տարիին մէջ հազիւ թէ կրնայ լրմնանալու :

— Նշած ամսու 28ին կէսօրէն ետքը Սուլթան Պայազիտի մզկիթին մինարէներուն մէկուն վրայ կայծակ իջնալով , շատ քարեր իրենց տեղէն խախտեց , և երկու հոգի , որ տակէն կանցնէին սպաննեց քանի մը քար վրանին իջնելով :

— Վրանի մը գողութիւններ պատահեցան անցած շաբթու ՚ի Վ. յօղու . բայց մինչև ցայսօր անհնար եղաւ այս չարագործները ձեռք ձգելու թէպէտև կառավարութիւնը խիստ հարկաւոր միջոցները ՚ի գործ դրաւ :

— Վարաքիայէն Վեյիւք տէրէ երթալու ճանապարհը քանի մը ատենէ ՚ի վեր խիստ աւրուած ըլլալով , կառավարութիւնը հրաման ըրաւ նորագելու զանիկա : Սուլթանութիւնը մօտ օրերս պիտի սկսի Միւթէրձիմ Մէհմէտ փաշային վերադառնալու թեամբը , որ պահապան զօրաց գլխաւոր հրամանատար է :

— Յունաց Պատրիարքարանը ամէն ուրբաթ օր ժողով կը ըլլայ կարգադրելու և կանոնի տակ դնելու համար յիշեալ զգին դպրատունները , հիւանդանոցները , հասարակաց սնտուկը և այլն և այլն : և այս բարեկարգութիւնը , ինչպէս յայտնի է հասարակութեանը , օգոստոսիա Սուլթանին յատուկ հրովարտակաւ , և ազգին երեւելեաց միջոցաւ ՚ի գործ կը դրուի :

ԲՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՒԵԼՈՐԴԱՊԱՆՏՈՒԹԻՒՆ

Վերըդ ապաշուտութեան՝ ուրուականներու՝ հնայից և տեսակ տեսակ սուտ գիտութեանց և արհեստից վրայօր ազգային օրագիրները երբեմն երբեմն յիշատակութիւն ըրած են . և հասարակութիւնը , մանաւանդ թէ ուսման ժողովուրդը այս միջոցութեանն ազատ պահելու գիտաւորութեամբ բաւական օգտուէտ բաներ գրած ունին որոնց մէջ ընդարձակապէս խօսած են այս խառնութեանց սկիզբը ուսկից ըլլալը , և որ ատենն աշխարհքի մէջ տարածուիլը , և որ ժողովուրդին մէջ աւելի կամ պակաս յառաջադիմութիւն գրածները , այս պատճառաւ ընթերցողաց ձանձրութիւն չտարու համար , աւերըդ սեպեցի զաստիք կրկնելը , այլ միայն կոխարդի մը վրայ ունեցած վրէժն , որ յուսարով թէ ստանի կտրեւութիւններով նախապաշարեալ և մարտիալ անձանց միտքը և երևակայութիւնը ուղղելու կրնայ օգուտ մը ընել , ու զեցի հրատարակելու . որ է այս :

Սուլթան յօրուածը քաղաքի ուսումնասիր յորդիւններն մեկը երբեք ըլլալով մեզի , յօժարամտութեամբ կրփութաբար հրատարակելու գայն , աներկրայ ըլլալով , թէ մեր ընթերցողներն ուսման կրնան թիչ կամ շատ օգուտ քաղել այս պատմութեան :

Վսկէջ քանի մը տարի յառաջ յօդուածացաւ ուսթեան (բիւմթիլով) ստակալի աստէն զարնուած երկար ատեն հիւանդ կրտսանդուէի . քաղաքի բժիշկներուն խորհուրդները և ջանքը անօգուտ եղան իմ ցաւերս մեղմացնելու , այն ատուիճան որ շատ հեղ մահը մեծ փափագով կրկնուէի և անանկ կը կարծէի որ այն ըլլալու էր իմ ցաւերուս միակ դեղը : Ս. յն ինչ ասանկ յուսահատած կրտսուպէի և իմ ցաւերս ալ ստակութեան վերջին կէտը հասեր էին , ինծի այցելութեան եկողներէն ասանկ կախարչութեանց հաւատ ընծայօր քանի մը մարդիկ և պատու կանայք բազմաթիւ օրինակներ յառաջ բերելով , իմ բովս եղող ազգականներուս կը համոզէին թէ Շէքէր էֆէնտի անունով կարդացող տաճիկ մը կայ անիկա միայն կարող է զիս աւտղացնելու , և առանց անոր անհնարին է կրտսին այս հիւանդին բժշկութիւնը : Վ՛մ ընտանիքս , թէ և ասանկ խաբէութեանց չէին հաւատար , բայց մէկ կողմանէ ցաւերուս ստակութեանն յուսահատած և հիւանդութեանս վաճառէն շուարած , և միւս կողմանէ մ'ոյիշեալ կարդացողին գալն և ինծի նայելն ինչ վնաս կը ըլլայ ըսելով , ազաւեցին զիս որ հաւանութիւն ստամ , որպէսզի Շէքէր էֆէնտին գայ

իմ քովս , և առողջութեանս պէտք եղած գործողութիւնը ընէ : Թէ և կենացս մէջ մէկ վայրկեան մը անգամ ասանկ տարօրինակ խաբէբայութեանց չեմ հաւատացեր , այսու ամենայնիւ իմ հաւանութիւն տուի , որ գայ նայի ինծի վերոյգրեալ էֆէնտին , համարեալ թէ ընտանեացս ստակութեան չգիմանալուս պատճառաւ , կամ թէ կախարդի մը վրայ փորձ ունենալու հետաքրքրութիւնս հաճեցնելու համար , որովհետև շատնցմէ կը բազայի ասանկ գործողութեան մը ներկայ գտնուելու : Հաւանութիւնը տալէս քանի մը ժամ ետքը , զի շեր ատեն կարճահասակ , խոժուաղէմ , ձերմակ մօրուք ունեցող մարդ մը աչքերս բանալուս՝ յանկարծ անկողնիս մօտը տեսայ , որ ինծի բարեւելն ետքը սենեակին մէջ տեղը ծունկ չորելով նստաւ , և սկսաւ իմ վիճակիս վրայ հարցուփորձ ընելու . քովս եղողները խնդրեցին իրմէն , որ ժամ մը յառաջ աղառէ զիս այս վտանգէն վասն զի շատ ժամանակ է որ ասանկ կրտսանդուէի կրտսին , այն ժամանակը հրաման ըրաւ , որ նախ նոյն սենեակէն հայրս և մայրս դուրս ելնէն , և երկու աշտանակ մամերով իր սուղը դնեն . և սկսաւ խաբէբայ կերպով մը լռելեայն 5-6 վայրկեան աղօթել , և երբեմն սենեակին մէջ ասոյին անդին :

Արիտի կուսակալ վեմամբայլ Մուստաֆա փաշան անցած ամսու 30ին լրելի օմանեան չա գենաւով հասաւ ՚ի կոստանդնուպօլիս . ուրտեղ իւր նահանգին վերաբերեալ քանի մը գործքեր կարգի պիտի դնէ : Մինչև Մուստաֆա փաշային դառնալը , Արիտի կառավարութիւնը իւր որդին Վէլի փաշան պիտի ընէ :

— Ալաթիա Ներքինի պաշտօն ըստած թաղը սաստիկ հրդեհ մը պատահեցաւ ամսուս 1ին կիւրակի իրիկունը . և թէպէտ անմիջապէս ամէն կերպ օգնութիւնը հասցուցին , և տէրութեան գլխաւոր պաշտօնատարները իրենց ներկայութեամբ բաւական քաջաբերութիւն տուին կրակը մարելու համար աշխատողներուն , այսու ամենայնիւ 30 տունի չափ և երկու շտեմարան հրոյ ճարակ եղան քանի մը ժամի մէջ :

— Վալսէն հարկանոց հոչակաւոր մօտի ի խոճր , որ նոյն նուագարանը հարկանելու վրայօք ունեցած սքանչելի տաղանդով և վարպետութեամբը խիստ մեծ համբաւ ստացած է բոլոր Վերոպայի մէջ , անցած շաբթու հասաւ ՚ի կոստանդնուպօլիս . և շոգենաւէն ելելուն պէս Չրաղանի կայսերական պալատը հրաւիրուեցաւ . ուր տեղ պատու ունեցաւ յիշեալ նուագարանը հարկանելու ՚ի ներկայութեան Նորին Վեհափառութեանը . որ խիստ գոհ ըլլալով այս երևելի արհեստաւորին զմայլելի վարպետութենէն , հաճեցաւ մարդասիրաբար աղամանդեայ մեծագին տուփ մը շնորհելու անոր :

— (Օմանեան կառավարութեան և Պարսից տէրութեան մէջ եղած վեճին կարգադրութեան պայմանագիրը ստորագրելուն առիթովը Պարսից դեսպան վեմամբայլ Մէհմէտ խանը ամսուս 2ին Վարձրագոյն Վուաը դնաց ընկերութեամբ դեսպանատան բոլոր պաշտօնատարսրը :

— Արհատատեն թէ Պէյօղլուի (կոստանդնուպօլիս) թէաթրոյին շինութիւնը մօտ օրերս պիտի սկսի , այրած թէաթրոյին տեղը , բայց անկէջ շատ մեծ և քարաչէն պիտի ըլլայ : Վս երևելի շինուածքին գաղափարը մօտիկ Սիթը հանեց :

կրփչէր , ետքը գրիչ մը սուաւ ձեռքը , և ծնողացս և իմ անունս հարցուց և թուղթի մը վրայ գիծեր և պատկերի պէս նշաններ գրելէն ետքը ծալլեց թուղթը և ջրով լեցուն մեծկակ բաժակի մը մէջ դնելով , պատուիրեց որ միայն այն ջուրէն խմեմ քանի մը օր : Վս միջոցիս մեծ մտադրութեամբ կը դիտէի զկախարդը , որ դառնալով դէպ ՚ի բազմականներուն անաչառ կերպով մը այսպէս ըսաւ « ինեզ՝ հիւանդը լուսնոյ վերջին օրերը և շաբթիին այս ինչ օրը ծնած ըլլալուն՝ հմայքը շատ սաստիկ են կապեր , թէ որ քանի մը օր ևս անհոգութիւն ընէիք , անհնարին էր քակելը , որովհետեւ սատանաները և դևերը այն սատիճան տիրեր են ասոր մարմնոյն վրայ , որ չեն ուզեր թողուլ զսեղծը և այսպէս չարաչար կրտանջեն . այսու ամենայնիւ վստահ եմ իմ վարպետութեանս վրայ , որ թէ և շատ դժուարութեամբ , բայց աւանց այլևայլութեան պիտի կրնամ ազատել այս սարսափելի կապանքէն : Վս խօսքիս վրայ բազմականներէն սկսան աղաչել որ շուրհք ընէ անմիջապէս ձեռք զարնէ գործողութեանը : Նկարելի է ըսաւ , ես առայժմ չեմ թողուր որ դևերը աւելի սաստիկ կապեն . բայց չեմ կրնար ալ քակել , որովհետեւ հեմայից ասանկ սաստիկ կապերը քակելու համար ,

որ Նոյնի պալատին ճարտարապետն է :

— Արեթէ երկու տարի կայ , որ Միջագիւղի (կոստանդնուպօլիս) սուրբ Նստուածածնի եկեղեցոյն ուսումնասէր և բարեպաշտ դպիւրնները իրենց մէջ սիրացօղ ընկերութիւն մը հաստատած են յանուն որբոյն Ստեփաննոսի , և այս ընկերութիւնը՝ ձեռնտուութեամբ յարգի և ազգասէր բաժանորդաց մինչև ցայսօր բաւականապէս յառաջադիմութիւն ընելով , իրենց դպրութեան վերաբերեալ գործքերը խիստ բարեկարգութեամբ կը կառավարուին : Իսկ այժմ նոյն բարեսէր միաբանութեան յարգի անդամները , ուսումնասիրական ոգիէ շարժեալ , ուրիշ մէկ գեղեցիկ և ազգօգուտ գործ մնալ յառաջ տանելու կաշխատին , այսինքն թանգարան վերձանութեան մը հաստատելու ջանք կընեն . ուրտեղ հայերէն լեզուու հրատարակուած բոլոր լրագիրները գտնուելէն ՚ի դատ , ամէն տեսակ օգտակար գիրքերով ալ կամաց կամաց միտք ունին դարդարելու նոյն թանգարանը :

— Վսպիտի բարեկարգատի ընկերութիւն մը ըստ ինքեան գովելի ըլլալով , և ազգիս լուրթեանը պատիւ ընելով , կը մնայ մեզի բարեմտութեւ անոր ուսումնասէր անդամոցը յարստեւ միաբանութիւն և աննախանձ սէր :

ՍԵԼԱՆԻԿ , 28 մոտի : Վլպանիայէն եկած լուրերը կը ծանուցանեն , թէ յիշեալ երկրին երեւելիներէն մէկը 800 հոգիի չափ գլուխը ժողովելով պարտամբէր է քաղաքական կառավարութեանը դէմ : Վս դիպուածին վրայօք մանաւոր տեղեկութիւններ չտանալով , չեմք կրնար ապահովել անոր ստուգութիւնը . այսու ամենայնիւ իրաւալ եղած ըլլայ , զորմանալու բան մը չկայ , երբ որ մտածելու ըլլամք , թէ խիստ քիչ ժամանակ եղաւ որ քաղաքական բարեկարգութիւնները գործքի դրուեցան Վլպանիայի մէջ . որուն երեւելիները շատոնցմէ ՚ի վեր ստիպած էին՝ բռնաւորական ընթացք մը ունենալու հասարակութեանը հետ :

նախ պէտք է լուսնոյ վերջին օրերը և հասարակ օր շատ դժուարութիւն կուտայ կրէր , այս պատճառաւ պարտաւորեցանք սպասելու 5-6 օր :

Ձեռուեալ ուրբաթ օրը կէսօրէն երկու ժամ ետքը ձերունազարդ կախարդը մեծ պատրաստութեամբ մը եկաւ , և մօտիկնալով ինձի ըսաւ , սիրտ առ տղաս այսօր պիտի քակեմ հմայքը , և դևերուն ձեռքէն աղատելու եմ գրիտանայ ծառայող , որ այսքան անգթութեամբ կրտանջեն զքեզ : Վս խօսքին շնորհակալ ըլլալէս քիչ մը ետքը՝ կախարդը հրաման ըրաւ որ սենեակին բոլոր պատուհանները և դուները բանան , և անկողինէս վար իջեցնելով սենեակին մէջ տեղը երեսս ՚ի վար պառկեցնեն զիս , վստա խիստ քիչ հազուատ թող տալով . երբ որ ամէն ըստաները ըրին , անմիջապէս հրամայեց որ դուրս ելլեն բոլոր ներկայ եղողները , վստա իրեն ըսածին նայելով դևերը ամենեւին բազմութիւնէն չեն ախարժիք եղեր : Արբ որ սենեակին մէջ կախարդը և ես մնացինք , քանի մը վայրկեան իմ բոլորտիքս ժուռ գալով կը դառնար , կաղթէր և առջին անգին փչելէն ետքը մօտիկցաւ քովս և ձեռքերով սկսաւ շփել կամաց կամաց ծունկերս , և մանաւանդ մարմնոյս այն տեղերը որ աւելի ցաւ կը զգայի :

կոստանդնուպօլիսէն հրաման գալով , որ այս նահանգիս յուսնաց ազգէն 138 հոգի իրկուի կայսերական նաւարանը և կառավարութեան զանազան գործատանց մէջ ծառայութիւն ընելու համար . անմիջապէս սկսան քանի մը երիտասարդ ձեռք ձգելու . զորոնք իսկայն նաւահանդիտար գտնուած օմանեան պատերազմական նաւը դրին :

— Կարու պ փաշային ընտանիքը պատրաստութիւն կրտեսնէ ձամբայ ելլելու օմանեան շոգենաւով , որ յատկապէս կոստանդնուպօլիսէն պիտի գայ , և զանոնք ստենելով շիտակ Վզիր պիտի տանի . ուսկից Վստըն պիտի երթան : Իսկ Նորին Վստեմութեան գտնածապետը թափելի Պակրի շոգենաւով մայրաքաղաքը կը դառնայ , ուսկից եկած էր կախմնացեալ հաշիւները վերջացնելու համար :

ԱՆԵՒՍԱՆԻՒԻԱ . 27 մոտի : Վարձրապատիւ Փոխարքայն 8-10 օր է որ Ղէքսանդրիա կը գտնուի . և եկած օրը փութացան այցելութեան գալու Վերոպայ տէրութեանց հիւպատոսները և կառավարութեան գլխաւոր գործակալները :

— Արհատատեն թէ Մէհմէտ Վլի փաշան 15-20 օրէն ետքը ձամբայ պիտի ելլէ ի յօրնո երթալու , ուսկից Մօնթէ Վաղիանո պիտի երթայ հանքային ջուրերը մանելու համար : Վրդէն հրաման տրուեցաւ , որ երկու շոգենաւ պատրաստուին , և Նորին Վարձրութեանը ուղեկից ըլլալու անձինքը որոշուեցան . որոնք են վեմամբայլ Յարութիւն պէյը , Սուպի պէյը , Կարու պէյը , Նուպար էֆենտին , պարսնայք Չիլինեան , թօտիցան և կայթանի պէյը , որ Նորին Վարձրութեան բժշկապետն է :

— կոստանդնուպօլիսէն եղիպոսցի շոգենաւը գալով այս օրերս , հաճելի լուր մը բերաւ փաշային . այսինքն թէ օգոստոսիա Սուլթանը գոհ ըլլալով Նեղոս գետին ցանկապատին տուած անունէն որ է Մէհմէտի , նոր պատուոյ նշան մը կը պատրաստէ եղեր Նորին Վարձրութեանը :

— Վարձրապատիւ Փոխարքային առողջութիւնը խիստ բարւոյր վիճակի մէջ է . և օրը երկու ան-

Վս միջոցիս կախարդին ըսի թէ , եթէ կարելի է ձեռքը չիջի մարմինս , վստա զի քանի որ ձեռքը կը զգայ , այնքան ցաւս կը շատնար . և աղաչելի որ գտնէ վերմակով մը (եօրկան) ծածկէ մարմինս որովհետեւ ինքը չեկամ դուները և պատուհանները գոց ըլլալէն ՚ի դատ , վստա քանի մը ծածկելով կար և աւելի գգեստ հազած էի . և հիմայ ասանկ բաց ըլլալովս կրնար մեծ վնաս մը գալ ինձի . հոգ մի ընեք ըսելով , ոչ միայն շարունակեց չիլել , այլ սկսաւ աւելի կոպտութեամբ և սաստկութեամբ ընել , և երբեմն երբեմն ոտքի ելլելով դէպ ՚ի դրան սուղը կերթար և իբր թէ դուրս կրվանտեր դևերը և սատանաները , փչելով աչքերը ծածկելով և ուրիշ տեսակ տեսակ խաբէբայութիւններ ընելով , ետքը կրկին քովս մօտիկցաւ և սկսաւ թշնամի պէս աւելի սաստկութեամբ զարնել մարմնոյս . կրկին անգամ գարնելին հասկըցուցի թէ , շատ տկար ըլլալուս անանկ սաստիկ զարնելուն չեմ կրնար տանիլ , համբերեկրէր , դևերը մարմնոյց մէջ մտեր են և այն ներութիւնները որ կը բաշտ դևերուն մարմնիդ զատուելուն համար է և ոչ թէ իմ զարնելս , միթէ չի տեսար անոնց մէկ մասը , որ դունէն և պատուհաններէն դուրս կը ընեն իմ գորութեամբս

պարտութեամբ կեցէ. առաւօտուն ձիով, և երե-
կին կառքով: Ըրտաբոյ կարգի տար կընէ քանի
որէ ՚ի վեր, և զարմանալին այն է որ շարունակ
պարտաւային հարկը կըփչէ որ բոլորովին եղանակէն
ուրու է: Եւ զորսն ջուրերը, որ արդէն քիչ մը
արձրցեր էին, սկսան վերտոխն ցածնալու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂԻԱ: Ռուսաց օգտատիրաւ կայսեր երկ-
րորդին բարձրագատիւ կոստանդին արչե-
լուսը մայիսի 10ին Վուլիչ հասաւ Ռոթերտա
նէ գալով: Վուլիչը հրամանատար սըր կորտոն
Պրըրը փութացաւ արժանաւոր մեծարանօք ըն-
դունելու զՎորին կայսերազուն Վարձրութիւնը:
որիւր բոլոր պաշտօնատարներովը անմիջապէս
մտնայ ելաւ Վանորա երթալու արքայական կառ-
քով, որ պատրաստուած էին յառաջմանէ:

Ռոմնէլի մահուան լուրը խիստ մեծ և տրա-
նստաւորութիւն մը ըրաւ բոլոր Վալանտայի
Քիչ, և Տուպլինի բաղաբական ժողովը երեք շա-
բաթի չափ չհաւաքուեցաւ ՚ի պատիւ յիշատակի
անգուցեալ երեւելի Վալանտայի ատենաբանին:

Հասարակաց խորհրդարանին մէջ Վորտ Վէլ-
մոնը յայտնեց թէ, Վորթուկալի տերութեան
խառնութիւնները դադարեցնելու համար նոր
դաշնակցութիւն մը եղած է Վնգղիոյ, Վաղղիոյ
և Վայսնիոյ կառավարութեանց մէջ:

Վիստ հաւանական կերելի, թէ Վնգղիոյ ազ-
գային երեսփոխանաց ժողովը յունիսի վերջի օրերը
պիտի բաժնուի, և քիչ ժամանակէն ետքը ընդ-
հանուր ընտրութիւններ ըլլալով, նոր խորհրդա-
րանը սեպտեմբերի ամսուն պիտի կարգադրուի:

ԳԱՂՂԻԱ: կառավարութիւնը շատ օգտակար
ընկալաւ այս օրերու Ղեզայիտէն: Վյո երկ-
ին ընդհանուր կառավարիչ մարաջիստ Պիւժօն
ընտնուցանէ, թէ Վասիլի մէջ ըրած արչաւան-
քը խիստ յաջող վարձան մը ունեցեր է, և թէ
նայն երկրին բազմութիւն ցեղերուն մեծագոյն մասը
հարաւանգ էր Վաղղիոյ իշխանութեանը: Մարա-
ջիստ Պիւժօն այս նոր տիրած երկիրներուն մէջ

էր, ատանկ բան ամենեւին չեմ տեսնոր, այս
անգամին աւելի մեծ դեբը երեւու են, ուստի
նայնք ըրէ որ տեսնես ըսելով, սկսաւ այն ուսու-
ցեալ մարմինիս, այն յօդուածներուս, որոնց
մարդ չէր կրնար դպչել, դահիճի պէս սաստիկ
զարնէլ, և գազանի պէս հայտէ հայտ պոռաւ,
որ թէ դեբը և սատանաները մարմինիս մէջէն
հանելով, դուրս կըլլանտէր: Վայցցոյ որ ճարս
հասաւ, կարողութիւնն չմնաց, և անհնարին էր
ցանկացած փորձիս (որ շատ սուղ նստաւ ինձի)
կըջր տեսնելու, կախարգին ազաչեցի որ թող
այս զիս հանդիստ, նմանապէս սատանաները
և դեբն ալ, որ մարմինիս մէջն էին, տեսայ որ
մեղմաբար մտիկ չընէր, խտիւլ այսինքն սրգողելով
և անարգելով վախտեցի զանի, ինչպէս որ ինքը
սատանաներուն կողմէր ընէլ, և բոլոր ուժովս
կանչեցի իմ ազգականներս, որ վարը կըսպասէին,
որոնք զիս կիսամեռ, և քաշած նեղութիւններուս
ճանրութիւնը տեսնելով, շատ բարկացան խաբե-
լային վրայ, և դուրս հանեցին զանի: Ղջմարիտ
կոտմ, որ մինչև հիմայ, երբոր միտքս կուգայ
յիշեալ անօրէնէն քաշած չարաչար տանջանքս,
կըտակամ կըքստմիմ, Վնթերցողին դիւրին է

հարկաւոր եղած բարեկարգութիւնները հաստա-
տելով, և չափաւոր տուրք մը գնելով անոնց
բնակչացը վրայ, մայիսի 6ին դարձեր է Ղեզայիտ:

Կըհաստատեն թէ յիշեալ մարաջիստը իւր
հրաժարական խնդիրը մատուցեր է, և մօտ օրերս
պիտի մեկնի Վաղղիա գառնալու համար: Տակա-
ւին յայտնի չէ թէ որուն պիտի յանձնուի Ղե-
զայիտի ընդհանուր կառավարութեան բարձր
պաշտօնը. բայց ուր որ ըլլայ, և որչափ սրժանա-
ւորութիւն ալ ունենայ, տարակոյս չկայ, թէ շատ
գժուարութիւններ և նեղութիւններ պիտի պա-
տահին մինչև որ բաւական ժամանակ անցնի, և
կարող ըլլայ աղէկ մը իմանալու այս երկրին վի-
ճակը և անոր ժողովրդոց կացութիւնը, որպէսզի
ըստ այնմ հոգ տանի հասարակութեան յառաջա-
դիմութեանը և բարօրութեանը վրայ:

Վայսնի կողմէն եկած լուրերը կըձանուցանեն
թէ յիշեալ երկրին Վոմարէ անուն թագուհին,
նմանապէս բոլոր ժողովուրդը վերստին ընդուներ
և ճանաչեր են Վաղղիոյ կառավարութեան պաշտ-
պանութիւնը, և բարեկամօրէն կարգի դրուե-
ր են բոլոր վեճերը որ յիշեալ թագուհին և Վաղ-
ղիոյ տէրութեանը մէջ ծագեր էին:

ՍՊԱՆԻԱ: Վանի մը ժամանակէ ՚ի վեր տարա-
ձայնութիւն մը կըտիրէ վեհափառ թագուհին
և իւր լծակցին Տօն Պրանչիբոյցին մէջ, և այս
գայթակղական ընտանի անմիաբանութիւնը մեծ
նիւթ մը եղած է առհասարակ ամէն լրագրաց,
որոնք կերպ կերպ մեկնութիւններ կուտան այս
դժբաղդ դիպուածին. որուն ստոյգ պատճառը
ինչ ըլլար չգիտցուիր: Ամանք կրեն թէ թա-
գուհին էրիկը Տօն Պրանչիբօն կուգէ եղեր, որ
թագաւորական արտօնութեանցը ինքն ալ մա-
նակից ըլլայ. ուրիշները կըհաստատեն թէ, թա-
գուհին ամենեւին մտիկ չընէր եղեր իւր լծակցին,
նաև ընտանի գոյժքերուն մէջ. որոնք թագաւո-
րական իշխանութեանէն դուրս են բոլորովին, և
ուրիշ զանազան անկայել զրոյցներ կըհրատարա-
կեն, մանաւանդ Վանորայի լրագիրները, որ այլ
բայական արժանաւորութեանը կըդպչին: Հիմա

երեւակայելով, թէ նրբան ցաւ կըստաձուռէ, եթէ
անինայ գարնելու ըլլայ մէկը անանկ ուսուցեալ
և ակտացեալ մարմինի մը, որուն քիչ մը յառաջ
ձեռք չէին կրնար մօտիկ ցրել:

Վերջապէս թշուառական կախարգը տեսնե-
լով, որ իւր ձեռնաձուլութիւնները և խորամանկու-
թիւնները չյաջողէին ՚ի գտտ խոյտառակ կըլլայ
կըլլանտուի, սկսաւ գոռոզաբար սպառնալ, թէ
հիւանդը սկիզբէն ՚ի վեր ամենեւին իմ ըսածնե-
րուս չհաւատարուն և զօրութիւնս բանի մը տեղ
չընելուն համար, (որովհետև առաջին անգամն
ալ որ եկաւ երբեմն կըլինդայի անոր ըսածին, և
երբեմն տեղափոխութիւն կըցուցնէի անոր գա-
լուն) և հիմայ ալ ասանկ անարգանօք զիս վաճը
տեղուն համար շատ սրգողեցայ, ուստի իմ գօրու-
թեամբս և հակառակ աղօթքներովս դեբը չար
քան զառաջինն բարկանալով, մինչև երկու օր
խիստ պիտի տանջեն զանիկա, և անպատճառ
մեռցնելու են հիւանդը. զգոյշ կեցիք դուք ալ
որ հիւանդին հաւատացածին խելք կուտաք, վասն
զի ձեզի ալ կրնամ կապել և մեծ մեծ վնասներ
տալ ըսելով, և սոսկալի անէճքներ թափելով
նախ իմ վրաս, և ապա անոնց վրայ որ չէին հա-

կուհիմա թագուհին լծակիցը զատ պարտա մը
կըբնակի, և ամենեւին Վորին Վեհափառութեա-
նը քով չերթար. ուստի յայտնի չէ թէ ինչ վախ-
ճան կրնայ ունենալ այս դժբաղդ տարաձայնու-
թիւնը: Վանի մը օրագիր կըհաստատեն թէ թա-
գուհին միտք ունի բաժնուելու իւր լծակցէն:

Վանորայի մէջ եղած գաշնադրութեանը հա-
մեմատ տասնև հինգ գունդ հետեւակ զօրք, 1000
ձիաւոր, և բաւական թնդանօթածիզ զօրք կը
պատրաստուին Վորթուկալի մէջ մտնելու՝ հրա-
մանատարութեամբ Տօն Վանուէլ Վօնչա ընդհա-
նուր զօրապետին:

ԲՐՈՒՍԻԱ: Սահմանադրական օրինաց գործա-
դրութիւնը օրէ օր առաջ կերթայ, և հասարա-
կութիւնը անդադար բարեմաղթութիւններ կընէ
Վորին Վեհափառութեան երկար կենացը համար
որ մարդասիրական ոգւով անդադար խնամք կը
տանի իւր հպատակաց ապստանի երջանկութեանը:

Վեհիկալեթի (Վրուսիա) կըգրեն մայիսի 4ին:
Շատոնցմէ ՚ի վեր առաջարկութիւն կըլլար
հրէաներուն որ իրենց շարաթին տօնախմբու-
թիւնը կիրակի օրը փոխադրեն, բայց անոնք միշտ
դէմ կեցան այս բանին. իսկ այժմ 700 հոգի չափ
Վեհիկալեթի հրէաներէն, որ նայն քաղքին
հրէայ բնակչաց մեծագոյն մասն է, ընդունեցին
այս առաջարկութիւնը:

Վյո փոփոխութիւնը խիստ օգտակար է մանա-
ւանդ առևտրական գործողութեանց համար, և
առիկա արդէն մեծ քայլ մըն է նմանողութեան
հրէից՝ քրիստոնէից հետ. որնոր կատարելապէս
չկրնար ՚ի գործ գրուիլ, մինչև որ բոլորովին
ջնջեն խիստ մեծ տարբերութիւնը բարուց և սո-
վորութեանց, որոնք Վերմանիոյ մէջ կըգտան
հրէաները քրիստոնէաներէն: (Ֆէնպաչի (Շէո-
սէ) հրէաներն ալ այս օրինակին հետեւեցան):

Վօզնի իշխանութեան երկրին մէջ բաւական
խառնութիւններ պատահեր են արմտեաց սղու-
թեանը համար. մանաւանդ Վիթթօլօ քաղաքը
հացագործաց խանութները բացեր, և աւար ը-
րեր են, և քանի մը հոգի սպանուեր են այս ան-
կարգութեանց մէջ:

ւատար իրեն խաբէութեանցը, մեկնեցաւ գնաց
Վյո տեսարանին ներկայ գտնուող պարզամիտնե-
րը սկսան դողալ, իսկ միւսները կըինդային թը-
շուառականին ըսածներուն, և գնա ինչ ընեիք
ունիսնէ ըրէ ըսելով վախտեցին զինքը: Վյո
դիպուածէս մէկուկէս ամիս ետքը բժիշկներուն
կարգադրութիւններովը, և դեղերովը կամաց կա-
մաց բոլորովին առողջացայ, և աղէկնալէս քանի
մը շաբաթ ետքը օր մը լսեցի թէ Շէքէր էֆէն,
տին մեռեր է յանկարծակի: Հինգ տարիէն ա-
ւելի է Շէքէր էֆէնտիին ինձի սպառնալը, և
դեռ ես կապրիմ, և անոնք որոնց մեծ վնասներ
պիտի հատցնեն իրեն խաբէութեանցը չհա-
տալուն համար, ամենեւին վնաս մը չկրեցին մինչև
այս օրս:

Վըցանկամ որ իմ գրուիտ եկած այս դիպուածը,
որուն ճշմարիտ պատմութիւնը ահա կըտեսնեն
ընթերցողները, կարող ըլլայ մեր ազգին դիւրա-
հաւանները և պարզամիտները համոզնելու, որ
պէսզի ամենեւին հաւատ չընծայեն սյուպիսի կա-
խարգութեանց, որոնց նպատակը խաբէբայու-
թեամբ ստակ վաստղիւնն գտտ ուրիշ բան մը չէ:
Պ. Պ.

ԲՈՐԹՈՒԿԱԼ. 1. յս երկրէն եկած վերջի լուրք. բը կը ճանուցանեն, թէ () բարձր քաղաքին ապրուտամբայ ժողովը չընդունեն է անդրիսցի պաշտօնակալ գնդապետ Վ. ուսայրոյն հաշտութեան առաջարկութիւնները, զորոնք լ'նգրիսցի և Վորթուկալի կառավարութեանց կողմանէ ըրած էր անոր. ուստի կերևի թէ դաշնակից տէրութիւնները պիտի պարտաւորին բունի միջոցներ 'ի գործ դնելու այս դժբաղդ երկրին քաղաքական պատերազմը դադարեցնելու համար: 1. յս տէրութեան խաղաղասէր ժողովուրդին սիրտը անպատմելի ուրախութեամբ լեցուցեալ, երբոր լսեց թէ դաշնակից տէրութիւնները որոշեցին բարեկարգութիւնը նորէն հաստատելու յիշեալ երկրին մէջ. ուրտեղ անկարգութիւնները և խռովութիւնները վերջի ծայրը հասնելով, խիստ խեղճ վիճակի մէջ ձգեցին գհասարակութիւնը:

ԱՒՍՏՐՈՒԱ: Վ. քննի քաղաքական ժողովը մտայտի Վին սկսաւ տոմսակներ բաժնելու աղբւտաց, որոնք նոյն տոմսակաց գորութեամբ կարող պիտի ըլլան որոշեալ գիներէն (նարգ) պակաս արժողութեամբ հոց ծախու առնելու:

Յիշեալ մայրաքաղաքը բնակող Պարոն տը Ռոթշլաը 3000 Ֆլորին խրկեց քաղաքական ժողովոյն, որպէսզն նոյն տոմսակաց թիւը աւելցնեն:

Օպերէլէի օրինակն անուն ըստգիրը հրամանագիր մը կը հրատարակէ, որով Վատրիսցի կառավարութիւնը առայժմ կարգիլէ ամէն տեսակ արմտեաց դուրս ելլելը: Մի և նոյն գգուշութիւնը 'ի գործ կը դնէ նաև () լուսնակուրիի դքսութիւնը:

Կը հաստատեն թէ բարձրագատիւ Մէթէրնիքի իշխանը, իւր պաշտօնը ուրիշ մը յանձնելով միտք ունէր հասարակաց գործքերէն ետք քաջուելու, բայց Վորին Վարձութեան այս առաջարկութիւնը հիմնականում պիտի ուշանայ կրտն, 'ի գործ դրուելու զանազան պատճառաց համար:

ՕՒՆԸՕՒՆ ԼՈՒՐԵՐ

Չմիւռնիս, 13 յունիս:

Կրէկ մեր սուրբ թարգմանչաց Սահակայ և Մեսրոպայ տօնախմբութիւնը ըլլալով, մեծ հանդէս եղաւ քաղաքիս Մեսրոպեան ուսումնարանը, որնոր 'ի նշան ուրախութեան և 'ի պատիւ տօնախմբութեանս մրտենիի ոստերով, և ուրիշ ազնիւ զորդերով զարդարած էին: Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն մէջ զիստաւոր պաշտօն և պատարագ ըլլալէն ետքը, պատարագիչ քահանան բոլոր ժողովուրդը և եկեղեցականները, նմանապէս դպիրները և դպրատան աշակերտները ձեռքերնին մում և մրտենիի ոստ բունած թափօրով յիշեալ վարձարանը գային, ուրտեղ հոգևորական երգերը կէս ժամի չափ շարունակուեցին ետքը, գրաբառատենաբանութիւն մը կարդաց յառաջագէմ աշակերտներէն Պաղչէճիլցի պարոն Մարտիրոսը, գիտութեան և ուսմանց արժանաւորութիւնը և բարիքը յառաջ բերով, այնուհետև ձայնաւորի աշակերտները քաղցր եղանակաւ երգ մը սկսան երգելու. որուն ըմբռնալէն ետքը ուրիշ աշխարհաբար ատենաբանութիւն մըն ալ կարդացուեցաւ, որ Պալապանեան ուսումնասէր պարոն Սարգիս ծաղկահասակ աշակերտին աշխատասիրութիւնն է. որնոր օրագրիս հետեւեալ թուոյն Վա նասիրականին մէջ պիտի հրատարակեմք:

Վագրին հոգաբարձուները, Սիւնեայ Ռիւրոնեան անդամները և բազմաթիւ ուսումնասէր ժողովուրդ ներկայ գտնուեցան այս ազատիրական հանդիսիս մէջ, և մեծ եռանդեամբ տչքէ կանցնէին աշակերտաց հայերէն, իտալերէն, գաղղիարէն, անգլիարէն, յունարէն և տաճկերէն գրուածքները և ուրիշ ազգի ազգի աշխատասիրութիւնները, որոնք թանգարան Վերջանեան ըսուած սենեակին մէջ մեծ գրասեղանի մը վրայ դրուած էին: Վորը հանդիսականները մեծ և պղտիկ հոգւով չափ միտքարուեցան այս հայրենասիրական տօնախմբութեանս վրայ, որոնցմէ ջերմեռանդ ազգասէրները ուրախութեան արտասունք թափելով գոհութիւն կուտային Վերին Վախախնամութեանը, որ 1845ին պատահած ահագին հրկիզութենէն հրաշքով մը ազատելով մեր Օմիւռնիսցի հայազգի ժողովուրդը միակ պարծանքը Մեսրոպեան մեր ուսումնարանը կրտնք, արժանի ըրաւ զբարեկարգ հասարակութիւնը վերստին տեսնելու այս հանդիսաւոր ազգասիրական տօնախմբութիւնը:

Բարեբաղդ կը համարիմք զմեզ ծանուցանելու, թէ յիշեալ ուսումնարանին ազնուամեծար հոգաբարձուաց վրայ ունեցած ակնկալութիւնն իսկովն կատարեցաւ, ուստի մեր մտերիմ շնորհակարգութիւնը կը փութամք հրապարակաւ մատուցանելու անոնց 'ի կրտնք բարենախանձ և եռանդուն ջանիքը համար. նմանապէս յարգի վարժապետաց անխնայ աշխատանքը գովութեան և շնորհակարգութեան արժանի կը համարիմք:

Ի ըստգրիս նախընթաց թուով ծանուցնիք, թէ ազգային գործոց բարեկարգ կառավարութեանը համար երկու խորհրդարան պիտի հաստատուի 'ի Կոստանդնուպօլիս որոնցմէ մէկը Վաղձ աշխարհային գործոց և միւսը Վաղձ կոթորակեան գործոց պիտի կուշուի: Վախարհային գործոց ժողովը արդէն կարգադրուած և կայսերական հրամանագրաւ հաստատուած ըլլալով, սրտտ անձին կը համարիմք անոր արժանայարգ անդամաց անուանիքը հրատարակելու. որոնք ընդ ամէնը 20 անձինք են. այսինքն 19 խորհրդակից անդամ և մէկ երեւոյնդան:

- Վրբունի վաւօդապետ և արքունի գործատանց վերատեսուչ Տատեան Յօհաննէս ամիրա:
- Վրբունի վաւօդապետ Տատեան Պօլոս ամիրա:
- Վրբունի ճարտարապետ Կարապետ ամիրա:
- Վրբունի ճարտարապետ Յօհաննէս ամիրա:
- Միտք ամիրա Միտքեան սեղանաւոր:
- Միքայէլ ամիրա Փիլիպեան "
- Իէորդ ամիրա Երամեան "
- Միլիտի ամիրա Ղեզայիրեան "
- Մաքսուտ ամիրա Սարիմեան "
- Յօհաննէս աղա Եղիա Չէլէպիեան հացագործ:
- Ստուածատուր աղա Սարաֆեան ջուխաճի:
- Յօհաննէս աղա Չօպանեան ոսկերիչ:
- Թոււմաճան աղա Մարտիրոսեան վաճառական:
- Յօհաննէս աղա Սուրենեան ժամագործ:
- Բերդէ աղա Պաշարղիլիեանեան խաղաղ:
- Կարգիս աղա Բըլձձըպաշը:
- Կրիգոր աղա Թիւյիւղեան պէզազ:
- Կարապետ աղա տէր Կրիգորեան թիւլպէնտճի:
- Սահակ աղա Բիւլիւկ Յակոբեան քերէտէճի և ժողովոյս երեւոյնդան Յակոբ աղա Կաճիկեան:

— Մեծ շարժում օր իրիկուան դէմ երկու յոյն արհեստաւոր մէկմէկու հետ կուր ընելով խիստ ջնջին պատճառի մը համար, ատոնցմէ մէկը իրենց սովորութեանը համեմատ յանկարծ դանակը հանեց և իւր ընկերին փորը խոթեց, որ քանի մը ժամէն ետքը մեռաւ: Վս եղեւնագործը անմիջապէս բռնեցին և հիմակուհիմա կառավարութեան բանտը դրուեցաւ:

— Քաղաքիս շրջանից ընդհանուր հիւպատոս մօտիւ յաբօպ Վան Վիննէփը, որ արդէն քանի մը տեսակ պատուոյ նշաններ ունի, այս օրերս ուրիշ նոր նշան մըն ալ ընկալաւ շրջանից վեհապետութեանը, որ շատ ժամանակէ 'ի վեր կրնէ յիշեալ տէրութեանը:

— Բանի մը օրէ 'ի վեր սաստիկ տաք կրնէ, և եղանակիս սովորական հիւանդութիւնները սկսան տարածուիլ. որոնցմէ շատ նորահաս տղաքներ ակտուցեալ են. բայց բարեբաղդաբար մինչև ցայժմ աղետալի հետեւանքներ չունեցան:

— Կոստանդնուպօլիս Ռուսիոյ դեսպանատան երկրորդ թարգման հայազգի արժանայարգ պարոն Վամադիք, որ քաղաքական գործքի մը համար Վթէնք գացեր էր, այս շաբթու իզմիր հասաւ և անմիջապէս շարունակեց իւր ճանապարհորդութիւնը Կոստանդնուպօլիս երթալու համար:

— Կրէկ երկու մուսցի տաճիկ Վի Կիւնէս ըսուած գինետունը կերթան, և բաւականապէս արբեւալէն ետքը կուզեն այն տեղը ննջել. իսկ գինեվաճառը կրտն անոնց թէ պառկեցնելու տեղ չունիմ. ասոր վրայ բարկանալով այս երկու մոտացի եղեւնագործները դանակով կրտնանեն զյիշեալ գինեվաճառը և կրտնանք. բայց պահպանները շուտով հասնելով ձեռք ձգեցին զանոնք: Սիկէց 'ի գառ երէկ և այսօր ուրիշ մարդասպանութիւններ և գողութիւններ ալ եղան:

ՕՒՆՈՒՅՈՒՄ

Շնորհի մակեթական վաճառական մը այս օրերս Պոսթալէն Լասաւ Իշլըր Սուէլէ և Եփեսոսի ճանապարհաւ, իւր հետը բերելով քեանի քեանի պատուական շնորհ ծախուելու համար: Սուսի ո՛վ որ իւրէ Սալէ պատրիշ կրնայ քեանել զնէք:

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Ս. Օրայիրը երկու շաբթու անդամ մը կըտային տարեկան ստորագրութեան գինը 120 զուռուշէ կամիսիկ (իւնիս) ուր ուզէ կրնայ ստորագրիլ:

- Իզմիր օրագրութեան տպարանը:
- Կոստանդնուպօլիս Պատրիարքարանի գրագիր Պեռպեան պատուելի պարոն Ալեքիսիս սենեակը:
- Պրուսա Բաղարձեան Մատթէոս ու Գրիգոր աղայից վաճառ:
- Ազգասէր Եւսուֆեան Գեորգ աղային վաճառ:
- Գահիրէ Եղեպարեանց Մ. Ալէքսան աղային գրատունը:
- Յապղէ Բրուսիս ու Միացեալ Կահանաց Ալեքիսի հիւպատոս Սրապիսեան աղա Յակոբին գրատունը:
- Թրեստ Արեւան Գրիգոր աղային գրատունը:
- Կարին Յակոբճանեան Յօհաննէս աղային վաճառատունը:
- Բերիս արժանապատիւ տէր Գեորգ աւագ քահանային տունը:
- Պաղատա Անգղիոյ աւալին թարգման աղա Իսայիին տունը:
- Բեդրապուրի Գաթեան Սրիմանց աղա Ալեքիսի գրատունը:
- Թիֆլիզ Կարենեան պատուելի Յակոբ վարժապետին գրատունը:
- Գաւրէճ Շիրմազանեան Վարդանանց աղա Գալուստին վաճառ:
- Կալիթա պարոն Փ. Ա. Գեորգեանին գրատունը:
- Ստորապարտաց Սամ և ընկերաց վաճառատունը:
- Սինկափոր Աբգար և Ստեփաննոս պարոնաց գրատունը: